№ 75 Մայիսի 8 (20) 1880 Մայիսի 8 (20) № 75

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ռացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Հայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանանց մասնաժողով.—Ներքին տեսութիւն, կոմս Լորիս Մէլիքովի գործունէութիւնը։ Նամակ Ալէքսանդրապոլից։ Նամակ Մօսկվայից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն, Կ. Պոլսի անգլիական դեսպանը։—Հայտարարութիւններ։—Բանասիրական խնդիր։

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Կիրակի, մայիսի 11-ին Թիֆլիսի կանանց մասնաժողովի ջանքերով լինելու է Ալէկզի յօգուտ Վանի սովատանջների։ Մենք կուզենայինք մի քանի խօսք ասել առհասարակ այն փողերի գործադրութեան մասին, որ հաւաքում է մեր կանանց մասնաժողովը։

Մեր մէջ ամէն գործիքները աշխատում են միշտ միմեանց գերազանցել իրանց աշխատանքների մէջ, բայց մեր ամէն գործիչներին յատուկ է, ուշադրութիւն չը դարձնելով աշխատանքի բաժանութեան օգտաւէտութեան վրա, աշխատել նոյնը անել, ինչ որ անում է միւսը...

Մի լրագիր կամ ամսագիր հաւաքում է փողեր յօգուտ սովատանջների և ուղարկում է այդ փողերը Վան կամ Կ. Պոլիս,—կանանց մասնաժողովն էլ նոյն է անում, չը մտածելով որ իրան աւելի մատչելի է իր հաւաքած փողերը գործ դնել նոյն իսկ այստեղ, Անդրկովկասում, առանց ուղարկելու Վան կամ Կ. Պոլիս։

Բացատրենք մեր միտքը։ Այս րոպէիս բազմաթիւ հայասատանցիներ՝ հայեր, ասորիներ, եզիդիներ և այլն, մերկ և սոված թափվել են մեր երկիրները և մուրացկանութիւն են անում քաղաքներում և գիւղերում։ Մեր կարծիքով, մեր կանանց մասնաժողովը իր հաւաքած դրամները կարող էր գործ դնել այս տեսակներին օգնելու համար, մանաւանդ որ կանանց մասնաժողովը կազմում է մի բաժին այն մասնաժողովի, որ կառավարութեան թոյլտուութեամբ հաստատվեցաւ Թիֆլիսում վերջին ռուս-թիւրքաց պատերազմի ժամանակ և որի նպատակն էր օգնել թիւրքիայից գաղթականներին։ Նոյնը մեր կարծիքով, պէտք է շարունակէր մասնաժողովը և այժմ, երբ սով է յայտնվել Հայաստանում։

Մասնաժողովը պաշտօնապէս դեռ գոյութիւն ունի, տակաւին լուծված չէ,—բայց այլ ևս չէ գործում, անգործ է մնում, այն ինչ այժմ ամենայարմար և ամենանհրաժեշտ ժամանակ է գործելու։ Հայաստանի սովատանջներին օգնել կարելի է ոչ թէ միայն փողեր ուղարկելով թիւրքիա, այլ նոյն իսկ այստեղ, Անդրկովկասում և Թիֆլիսում թափված ողորմելի գաղթականներին օգնելով։

Իսկ այսպիսի գործ աւելի հեշտութեամբ կարող է յանձն առնել մի մասնաժողով, քան թէ լրագրի և ամսագրի մի խմբագրութիւն։ Ռացի փողերից կարելի էր թշուառ գաղթականներին օգնել և շորերով, իսկ շորերի պահեստներ ունենալը աւելի մատչելի է մի մասնաժողովին, քան թէ մի խմբագրութեան։

«Մշակի» երէկվայ համարում ընթերցողը կարդացած կը լինի Թէլլուից մեզ գրված նամակը, որից մենք տեղեկանում ենք որ թէլլուեցիները արդէն հաւաքել են բաւական շորեր, բայց չը գիտեն ո՞ւմ ուղարկեն այդ շորերը։

Մեր կարծիքով ներկայ հանգամանքներումն էլ լաւ կը լինէր գործ դնել աշխատանքի բաժանութեան սկզբունքը։ Թող կանանց մասնաժողովը շարունակի հաւաքել փողեր, հաւաքի և շորեր և գործի նոյն իսկ Անդրկովկասում, իսկ խմբագրութիւնները թող շարունակեն փողեր ժողովել և ուղարկել Կ. Պոլիս։

Մեր այդ առաջարկութեան վրա դարձնում ենք մեր պատուելի տիկինների ուշադրութիւնը։

Մի և նոյն ժամանակ ցաւալի է, որ պատերազմի ժամանակ հիմնված գաղթականներին օգ-

ԽԵՆԹ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

ԼԵ.

Հեռանալով Ծերունի Խաչի տան աւերակներից, Վարդանը չը գիտէր ուր գնար։ Հոլմներից ստացած տեղեկութիւնները այն ասոիճան անորոշ և մթին էին, որ նա ժամանակում էր մի վճռական քայլ անել։

Երեկոյեան ժամն էր արդէն, արեը թեքվում էր դէպի իր գիշերային մուտքը։ Վարդանի աչքի առջև դրած էին մի և նոյն տխուր և սրտում տեսարանները,—աւերակ, անմարդաբնակ գիւղեր, մշակութիւնից զրկված դաշտեր, և աւելի ոչինչ։—Մթնէ այդ ամբողջ գաւառում մի հատ հոյ չէ մնացել, մտածում էր նա։ Ցանկարծ դատարկ անապատի մէջ երևաց մի մարդկային կերպարանք։ Նա դանդաղ և անհամասար չարժումներով բարձրանում էր դէպի լեռան գագաթը, երբեմն կանգ առնելով, երբեմն իր չուրջը նայելով և երբեմն քարերից բռնելով, որ ցած չը գլորվի։ Այսպես հասաւ նա մինչև սեպացած քարաժայռի գագաթը, որ կախ էր ընկած անդունդի վրա։ Արևի վերջալուսով նկարված էր նրա փոքրիկ մարմնի գծագրութիւնը, որ անչարժ արձանի նման, քարաժայռի գագաթից նայում էր դէպի լայնատարած հովիտը, ուր մի քանի օրվայ մէջ կատարվել էին այնքան չար եղեռնագործութիւններ, այնքան չատ աւերումներ։ Երկար այնպես նայում էր նա, և կարծես, մտածում էր մի բան վճռել, որը խիստ ծանր էր նրան։ Վարդանի ուշադրութիւնը չէր կարող չը գրաւել այդ երևոյթը, որ նախագուշակում էր մի տարօրինակ վախճան։ Նա իր ձիու սանձը քաշեց և սկսեց հեռուից նայել

Վարդանը տեսաւ, որ քարաժայռի գլխին արձանացած մարմինը մի քանի յուսահատական չարժումներ գործեց, կրկին նայեց դէպի լայնատարած հովտի աւերակները, յետոյ աչքերը ձեռքով բռնելով, իրան ցած գցեց քարաժայռի բարձրութիւնից դէպի իր առջևը բացված անդունդը։ Փոքրիկ մարմինը գնդակի նման գլորվելով, երբեմն քարերին զարկվելով, արագութեամբ պտտվում էր, առանց մի տեղ կանգ առնելու։ Վարդանը ձին առաջ քշեց, մի րոպէում հասաւ լեռան ստորոտը, օգնութիւն հասցնելու։ Մարմինը դեռ գլորվում էր, բայց նա բոլորովին չը հասաւ մինչև անդունդը։ Ժայռերի պատահածքից բուսած թուփերը բռնեցին նրան։ Վարդանը այժմ ուրախ էր, նա յոյս ունէր ազատել անմասպանի կեանքը։ Նա վեր նայեց, տեսաւ, որ մարմինը գտնվում էր աւելի քան լիսուն ոտնչափ բարձրութեան վրա, և անչարժ բռնված էր թուփերի մէջ։ Մեծկոկց ցած բերել նրան,—այդ եղաւ երիտասարդի հոգածութեան առարկան։

Նա ցած իջաւ ձիուց և սկսեց հետազօտել պարսկի նման վեր բարձրացած քարաժայռի մակերևոյթը, որոնելով մի ճանապարհ, որ մատչելի լինէր թուփերին։ Ոչ մի կողմից ելք չը կար։ Մարմինը տակաւին անչարժ գտնվում էր իր տեղում, առանց կենդանութեան մի նշոյլ անգամ ցոյց տալու։ Արդեօք ինչն էր սոսկալի այդ թշուառին անձնասպանութիւն գործել։ Վարդանի տխուր չրջապատը այժմ այն ասոիճան իսպառ նշանակութիւն էր ստացել նրա համար, որ իւրաքանչիւր չնչին առարկայի մէջ անգամ գաղտնիներ էր տեսնում։

Նա նկատեց, որ առանց իր կեանքը վտանգի ենթարկելու, անկարելի էր ազատել թշուառին, որը գուցէ դեռ մեռած չէր, որին գուցէ դեռ կարելի կը լինէր օգնել։ Կարեկցութեան զգացմունքը նրան մոռանալ տուեց իր անձը և յանձն առեց մի վտանգաւոր ձեռնարկութիւն։ Նա նկատեց, որ ժայռի կուրծքի վրա բուսած թփերից, կամ ցցված քարերից բռնելով, կարելի էր վեր բարձրանալ, եթէ նրանք այնքան ամուր էին, որ կարողանային պահել իր մարմնի ծանրութիւնը։ Վարդանը օձի դիւրաթեքութիւն և կատուի արագաշարժութիւն ունէր։ Նա ձեռքը տարաւ, բռնեց առաջին սեպացած քարից, և ճանկրտելով սկսեց վեր բարձրանալ։ Մի քանի արշին հազիւ էր բարձրացել գետնի մակերևոյթից, յանկարծ ձեռքի բռնված քարի կտորը պոկվեցաւ և ինքը ցած գլորվեցաւ։ «Այստեղից յարմար չէ», մտածեց նա, առանց ուշադրութիւն դարձնելու իր ձեռքերի վերա, որոնք քսվելով քարերի սուր ծայրերին, քերթվեցան և արիւնը դուրս ցայտեց վէրքերից։

Վարդանը այն տեսակ բնաւորութիւններից էր, որ դժուարութիւնները աւելի բորբոքում էին նրա եռանդը, և կարծես, վիրաւորում էին նրա անձնասիրութիւնը, թէ ինչու յաղթել չէր կարողանում նա յանդգնում էր։ Արեգակը մանելու վրա էր։ Մի քանի րոպէից յետոյ խաւարը կը թանձրանար և արգելք կը դնէր նրա յաջողութեանը։ Նրա զգլխում ծագեց մի միտք։ Նա առեց երկայն պարանը, որ կապած ունէր ձիու թամբին։ Դա նրա զէնքերից մէկն էր և ծայրին կապված էր կապարեայ մի ձուչափ գնդակ։ Նա գնդակը վեր նետեց և պարանի ծայրը ամուր կերպով փաթաթվեցաւ մի ծառի կոճղից, որ հեռու չէր անձնասպանի ընկած տեղից։ Բռնելով պարանի միւս ծայրից, նա սկսեց սարդի արագութեամբ վեր բարձրանալ, և մի քանի վայրկեանի մէջ գտնվում էր անչնչացած դէակի մօտ։ Նա գրկեց դիակը, և ուրան մեռ եղաւ նրա զարհուրանքը, երբ նկատեց, որ իր գրկում գտնվում էր Թօմաս Լիֆէնդին։ Մի րոպէում բարկութիւնը, զզուանքը, տանջութիւնը և վրէժխնդրութեան կատաղի զգացմունքը փոփոխակի կերպով պաչարեցին նրա սիրտը։ Նա պատրաստ էր այդ զարչելի մարմնը կրկին ցած գլորել ժայռի բարձրութիւնից անդունդի մէջ, որ մընացած ոսկորներն էլ ջախջախվէին, որ նա դազաններու գիշակեր թռչունների կերակուր դառնար։ Բայց մթնէ կարելի էր այսպես անկիրթութեամբ վարվել անչնչացած մարմնի հետ,—այդ հեռու էր Վարդանի մտածողութիւնից։ Նա զգուշութեամբ դիակը պարանով ցած թողեց և ինքն էլ նրա ետևից վայր իջաւ։

Վարդանի առաջին հոգսը եղաւ սառուցել արդեօք նա մեռած էր, թէ տակաւին կենդանի էր։ Ոսկորները մի քանի տեղ ջարդված էին, գլուխը և երեսը քարերին զարկվելով, քերթվել, այլանդակվել և արիւնով չաղախված էին, բայց չնչառութիւնը դադարած չէր, երևում էր, որ ուշագնացութեան մէջ է գտնվում։ Այդ չարագործը, որ այնքան վտանգ էր պատճառել Վարդանին, որ հազարաւոր տների կործանման և մի ամբողջ գաւառի ամայութեան պատճառ էր դարձել, իր այժմեան ողորմելի դրութեան մէջ չարժեց Վարդանի զութը։ Դուցէ աւելի բարեբախտ վիճակի մէջ, եթէ էֆէնդին նրա ձեռքը ընկնելու լինէր, Վարդանը կը սպանէր նրան, բայց այժմ նրա առջև դրած էր մի գերկ, որին պէտք էր խղճալ, որը օգնութեան էր կարօտ։

Վարդանը չատ գործ էր ունեցել վիրաւորների հետ և ինքը չատ անգամ վերք էր ստացել, և այդ մասին հարկաւորելիք սպեղանիները նա միշտ իր հետ էր ման ածում։ Դրա առաջին հոգսը եղաւ փաթաթել էֆէնդու գլխի և երեսի վերքերը, և դադարցնել արեան հոսումը։ Գիշերային խաւարը պատել էր արդէն, երկինքը ծածկված էր սև թուզվերով, սառնի քամին և որոտը գուչակում էին մոտալուտ մրրիկ։ Վարդանը մտածում էր այժմ մի օթևան գտնել։ Նա վեր առեց դիակը, կապեց ձիու վրա, բայց չը գիտէր դէպի որ կողմը դիմել։ Մերձակայ հայոց բազմաթիւ գիւղերում մի հայ անգամ չէր մնացել։

Վարդանը մտաբերեց, որ այնտեղից ոչ այնքան հեռու պէտք է գտնվէր քրդերի մի գիւղ։ սկսեց գիտել դէպի այն կողմը, իր ետևից քարշելով ձիու երտասանակը, որի վրա կապած էր վիրաւորը։ Այժմ երիտասարդը աղօտ կերպով հասկանում էր, թէ ինչը պէտք է հարկադրած լինէր էֆէնդուն, որ նա անձնասպանութիւնը աշխատում էր հանգստացնել իր խղճի խայթը։ Միթէ զղջացել էր նա, որ այնքան պատճառ, արտասուքի և այնքան աւերումների պատճառ դարձա...

նող ընկերութեան հիմնադիր անդամները ուշադրութիւն չեն դարձնում իրանց ընտրած մասնաժողովի անգործութեան վրա։ Եթէ մասնաժողովի անդամները չունեն ժամանակ և ցանկութիւն զորձելու, թող յայտնեն, որ այլ ևս չեն կամենում շարունակել իրանց գործունէութիւնը, ինչպէս այդ յայտնել են նրա անդամներից մի քանիսներ։ Եւ այն ժամանակ թող հիմնադիրները զումարվեն և շուտով ընտրեն մի նոր մասնաժողով։

Այդ տեսակ գործ յետ գցել էլ կարելի, այդ տեսակ ձգնաժամի ժամանակ անգործ մնալ էլ կարելի։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՄՍ ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎԻ ԴԱՍԱՎՈՐՆԵՐԻՆ-ԹԻՒՆԸ։

—

Ս. Պետերբուրգից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետևեալը։

«Բացի այն, որ կոմս Լորիս-Մելիքովի կարգադրութիւնները բարերար ազդեցութիւն են գործում, նշանաւոր է նոյնպէս և այն հանգամանքը, որ այդ կարգադրութիւնները մինչև այժմ չը տեսնված արագութեամբ են կատարվում։ Հէնց որ բարձրագոյն կառավարութիւնը կարգադրեց թեթևացնել այն երիտասարդների վիճակը, որոնք երիտասարդական անփորձութեան պատճառով ընդդիմացել էին օրէնքներին, բոլոր վարչութիւնների կառավարիչներին խիստ զրական հրամաններ ուղարկվեցան, որ այդ ողորմած կարգադրութիւնը խիստ իրագործվի ամենայն ճշտմանութեամբ։ Մի քանի օրվա ընթացքում 4300 երիտասարդներ ազատվեցան պոլիցիական հսկողութիւնից, 1900 մարդուց աւելի, որոնք աքսորված էին մտքի նահանջները, հայրենիք վերադարձան։ Հիմնաւոր, արագ և կատարելապէս, այդ երեք խօսքերը բովանդակում են կոմս Լորիս-Մելիքովի գործունէութեան ամբողջ նախագիծը։ Հէնց որ նրա դիտաւորութիւնները հասատատվում են բարձրագոյն իշխանութեանից, ամենակարճ ճանապարհներով կոմսը նրանց շուտով իրագործում է։ Կայսերական վերջին ողորմութեանը արժանացողները, երբէք այնպիսի ազատութիւն չեն ստանում, որ մի քանիսի համար անպատուղ լինի, իսկ միւսներին նոր վտանգի ենթարկի։ Կոմս Լորիս-Մելիքով մարզարական լուսաւորութեան մինիստրի հետ պայմանաւորվել է, որ պետական ուսումնարաններից վարչական ձևով արտաքսվածները նորից ընդունվին այդ ուսումնարանների մէջ և բացի այդ որ նրանց վերադարձնվին իրանց նախկին արտօնութիւնները, ինչպէս են ստիպենդիաներ և արքունական գանձապան օգնութիւններ։ Այդպիսով 2000 աւելի երիտասարդներ ոչ թէ միայն ազատված են անմեղեմար վիճակից, այլ նրանց սպասում է ապագայում ապագայ։ Մի և նոյն ժամանակ պէտք չէ մոռանալ, որ դատապարտվածների թիւում 300 աւելի երիտասարդներ կան, որոնք առաջ պետական ծառայութեան մէջ էին և այժմ նորից կը ստանան իրանց նախկին պաշտօնները։ Արդէն վերջացած քաղաքական զրոյների վերաքննութիւնը կամսի զործադրելի երկրորդ միջոցն է և դեռ ևս սպասում է բարձրագոյն հաստատմանը։ Ասում են, որ անցողական բանտերի մէջ մի քանի հազար դատապարտվածներ են կտրանաւորված, որոնք պէտք է Սիբիր արտաքսվեն։ Կոմս Լորիս-Մելիքովը դրանց զործերի վերաքննութիւնը հասարակ դատարաններին յանձնելով, այդպիսով մեղադիր է զինուորական դատարանից դատապարտվածների դաւը վիճակը թեթևացնել և նրանց ազատութիւն վերադարձնել։»

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

—

Ապրիլի 5

Վանի սովալուկների անտանելի դրութեան նկարագիրը լսելով մեր սիրելի ծնողներից և ուսուցչներից, մենք, Ալեքսանդրապոլի «Սիրբ-Նշանս» եկեղեցու ծխական զպրոցի այակերտներս չը կարողացանք անտարբեր մնալ և չօգնել մեր թշուառացած եղբայրներին մեր ուժերին համեմատ. դրա համար մեր մէջ սեռորգութիւն բանալով, հաւաքեցինք քառասուն բուբլի (40 ր.), որ անա ուղարկում ենք պատուական «Մշակին», վստահ լինելով, որ չատափոյթ կը հասցնէ, ուր հարկն է և կը հրատարակէ իր էջերում նուիրատուների անունները, որոնք են.—

Ուսուցիչներ—պ. պ. Վ. Գեոնջեանց 3 ր., և Մ. Մարիկեանց 3 ր., Աշակերտներ—Ն. Զիթոզլեանց 3 ր., Յ. Ղանթաջրեանց 2 ր., Գ. Ազազալեանց մի չփլաղ քսանոց—(1 ր. 40 կ.,) Յ. Մկրտչեանց 1 ր., Գ. Մոմիսեանց 1 ր., Գեղամ Կոստանեանց 1 ր., Վ. Ժամակոչեանց 1 ր., Մ. Օնենեանց 1 ր., Ա. Պետրոսեանց 1 ր., Մ. Ստամբոլցեանց 1 ր., Թ. Հէքիմեանց 1 ր., Յ. Մանտաշի Գէորգեանց 1 ր., Ա. Բաղդասեանց 1 ր., Մ. Գարգալոյեան (II) 1 ր., Գր. Ափոյեանց 1 ր., Գարեգ. Մանուսաջեանց 1 ր., Հաճ. Սիմէոնեանց 1 ր., Ն. Մուսիկեանց 60 կ., Ս. Սառաֆեանց 60 կ., Գարեգ. Ստեփանեանց 50 կ., Ս. Պատուրմաջեանց 50 կ., Սամփան Ջուվալեան 50 կ., Ստեփ. Ստեփանեանց 50 կ., Մանկոն Հէքիմեանց 50 կ., Մկր. Խաչատեանց 50 կ., Վ. Մարտիրոսեան 50 կ., Ռ. Խուրդայեանց 50 կ., Բ. Ալանեանց 48 կ., Գ. Մանտեսի Աւետիսեան 40 կ., Մկրտիչ Սահակեան 40 կ., Զ. Թուրդոյեանց 40 կ., Պետ. Շահբազեանց 40 կ., Զոլիմուխլեանց 40 կ., Գ. Շաբարեանց 40 կ., Վասամսաղաւ Կրտեանց 40 կ., Յով. Շահբազեան 35 կ., Բաղդասար Սերովբեանց 30 կ., Յով. Պողեանց 30 կ., Մ. Ջանիբէկեանց 25 կ., Ա. Ներսէսեանց 20 կ.. Մկր. Մխիթարեանց (Հայ-կաթոլիկ) 20 կ., Աղէքսանդր Ազապապեանց 20 կ., Սեն. Մկրտումեանց 20 կ., Հայկ Խաչատրեանց 20 կ., Մկր. Քուփալեանց 20 կ., Մկրտ. Գասազյանց (I) 20 կ. Են. Թաղէոսեան 20 կ., Ազատ Յարութիւնեան 20 կ., Բաղդասար Աւետեան 20 կ., Ե. Նալբանդեանց 20 կ., Ս. Սիմէոնեանց 15 կ., Մկրտիչ Շահունեանց 15 կ., Գ. Քեսպանեանց 10 կ., Մ. Վանէցեանց 10 կ., Խ. Հայրապետեանց 10 կ., Ոնոն 12 կ., Պ. Սարգիս Ցովհաննէսեան 1 ր.։ (Այս անձը մեր ընկերներից չէ, բայց ընդունեցինք նորա նուէրը նորա համար, որ խեղճը չը գիտէր, թէ քաղաքի մէջ փող հաւաքողները կան յոգուտ Վանի սովալների, թէ ոչ, որովհետև ոչ ոք չէ երեսացել նորա մօտ և այդ նպատակի համար փող չէ պահանջել, մինչդեռ ինքը փափաք է ունեցել իր լուման զցել սովատանջների զանձանակի մէջ)։ Ուրեմն աւելացնելով զպրոցի մէջ ժողոված 39 բուբլի վրա և պարտքի նուէրում 1 բուբլը, կանէ ընդամենը քառասուն բուբլ (40 ր.)

Փոստի ծախսը նուիրված փողերից չէ.

Աշակերտաց «Պ. Նշան» եկեղեցու ծխական զպրոցի—Մկրտիչ Օնէէցեանց, Վաղարշակ Ժամակոչեանց

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

—

25 ապրիլի

Զարաչար սխալվում են «Մշակի» № 64-ում Մոսկվայից Նամակի տակ տարարգրված ուսանողները, կարծելով թէ նրանք գրաբարագէտ Համբարձումի և Համամիտ են Ռուսաստանի մէջ ուսանողների հետ։ Այդ մոլորութիւն է, մի զարմանալի համարձակութիւն։ Ռուսաստանի մարդկ. ոչ ուսանողութիւնը, նոյնպէս և այս տողը գրողը, բոլորովին համամիտ է նրանց հետ, որ պ. Մելիքզադէն սխալ կարծիք ունի այժմեան ուսանողութեան մասին, որ նրա պէս տաղանդաւոր պրոֆիցիանտի համար չէ թերի նկարագրութիւնով երևան գալս գալ։ Արանում համաձայն ենք բոլորս։ Բայց ամբողջ հայ ուսանողութիւնը, բացի այդ 20 ուսանողներից, երբէք չի թողել տալ իրան այն գայրենի գոռոզութիւնը և այն ծիծաղալի որոտումը, որ թափում են «լուսաւորված» 20 ուսանողները «մարկ ու բորիկ» Մելիքզադէի վրա։ Ուսանողութիւնը կարամարտի ոլիմպիական բարձրութիւնից թափած այդ անմիտ չանթերը, կը նախատի զարմանք կրթութիւն և հիմնաւոր գիտութիւն ունեցող 20 ուսանողների այդ երեխայական վարմունքը։

Պ. Մելիքզադէն կարող է հաստատ հաստատված լինել, որ հայ ուսանողութիւնը, կրկնում ենք, չը համաձայնվում նրա ուսանողութեան վրա ունեցած հայեացքների հետ, երբէք չէր յանդգնի

Վարդանի լիլոզութիւնը չը խարեց նրան. խաւարի մէջից նշմարեց լոյսի նշոյներ. գիւղը պէտք է այնտեղ լինէր, դաշց դեռ բաւական հեռու էր։ Աեծրեը այժմ աւելի սաստիկ սկսեց տեղալ. նա հանեց իր վերարկուն, որի մէջ փաթաթված էր, և նրանով ինարով ծածկեց էֆէնդու մարմինը. Դիշերից բաւական անցել էր, երբ նա հասաւ գիւղի մօտ։ Տները, որպէս առնասարակ լինում են քրդերի գիւղերում, գեղանափոր խրճիթներ էին։ Վարդանը մտեցաւ ուռմին հանդիպած տանը, ձեռքը մեկնեց դէպի դուռը, տեսաւ, որ բաց էր։—Ահա մի բախտաւոր մարդուկ, որ զողերից երկիւղ չունի և քնում է առանց իր տան դուռը կողպելու, մտանց նա։

Թրմենում ճրագ չէր երևում, տանեցիք պառկած էին։ Վարդանը սկսեց բաղխել դուռը։ Քանի բոպէից յետոյ ներսից լսելի եղաւ կանացի ձայն.

—Ո՞վ ես։

—Աստուծոյ հիւր եմ.

Հիւրի անունը բաւական էր, որ նրանց ներս թողնէին։ Կինը խսկոյն ճրագ վառեց և ընդունեց նրանց։ Երևում էր, որ նա հանված և քնած էր, որովհետև հագին միայն կարմիր շապիկ ունէր, որ իջնում էր մինչև մերկ սրունքները։ Կինը օգնեց Վարդանին, երկուսը միասին ներս տարան էֆէնդուն և պառկեցրին օթոցի վրա։

—Հիւանդ է։

—Ոչ, վիրաւորված է։

Մանկամասալ կինը խսկոյն բերեց մի փոքրիկ արկղիկ, որի մէջ կային զանազան տեսակ սպեղանիներ և մի քանի, կոպիտ կերպով պատրաստված, վիրաբուժական զործիքներ։

—Ես մեր տան բժիշկն եմ, ասաց նա բաց անելով արկղիկը,—երբ ամուսինս կռիւի մէջ վիրաւորվում է, ես եմ դարմանում նրան։ Առաջ սկսուրս էր բժշկում, հիմա նա պատուել է. ես նրանից սովորեցայ։

Վարդանը որքան մեծ հաւատ ունէր քրդերի վիրաբուժական հմտութիւնների մասին, զարձեալ չնորհակալութիւն յայտնեց, թէ ինքն էլ փոքր ինչ հասկանում է այդ արհեստը, և առաջուց հոգատարել է վիրաւորի մասին ինչ որ պէտք էր։

Այդ պատահանը թէև փոքր ինչ զիպաւ մանկամասալ կնոջ տրտին, որ ցանկանում էր ցոյց տալ իր հնրքը, պատանինները, նա հանդատացաւ, երբ տեսաւ, որ հիւանդի վէրքերը փաթաթված էին։

—Այժմ պէտք է ձեր ձիուն խնամք տանել, խեղճը մնաց դրսում։

—Դուք նեղութիւն մի կրեք, ասաց երիտասարդը,—միայն ինձ ցոյց տուեցէք, թէ որտեղ պէտք է կապել։

Մանկամասալ կինը առաց ճրագը, առաջնորդեց հիւրին և բակի մէջ ցոյց տուեց մի տեղ։ Վարդանը նայեց իր չուրջը, տեսաւ, բակը չրջապատված էր խիստ ցածրիկ ցանկապատով։

—Այստեղ երկիւղ չը կայ, հարցրեց նա։

—Ինչ երկիւղ, պատասխանեց կինը ծիծաղելով,—գողը դռդի տնից բան չի տանի։

—Երանի ձեզ, ասաց Վարդանը իր մտքում։

Վարդանը ոչք ածեց իր չուրջը, տեսաւ, որ խրճիթի մէջ բացի մանկամասալ կնոջից և մի քանի երեխաներից, որ պառկած էին յատակի վրա, ուրիշ ոչ ոք չը կար։ Բայց նրանց ասանձայնը զարթեցրուց պառաւ սկեսուրին, որ մնացել էր անկողնի մէջ, հարցնելով.

—Սարօ, դուն ես,—եկար, որդիս։

—Սարսն չէ, պատասխանեց մանկամասալ կինը, մասանցով,—հիւր է։

Պառաւը լսելով, որ որդին չէ, գլուխը կրկին դրեց բարձի վրա և խսկոյն քնեց։

—Աչքերը չէ ջնջում, կարծում է, որ որդին է վերադարձել,—իմ ամուսինը։

—Ոչտեղ է ձեր ամուսինը, հարցրեց Վարդանը հետաքրքրվելով։

—Բաղդէդի մոտ. գնացել է կռուելու. մեր գիւղում մի ազամարդ չեմ գտնի. բոլորը այնտեղ են։ Ես էլ երկու օր է, որ սեկել եմ. գնացել էի ապար քերելու։

—Շնամ բերեցիք։

—Ինչ չէր, Աստուծոյ տուածից պէտք է գոհ լինել. թէ չատ լինի և թէ քիչ։

—Ազատ դիտար ազատ ժողովրդի, մտածեց Վարդանը,—որքան կեանք, որքան պարզութիւն կայ քո մէջ։ Դու ինչով ես մեզանից, որ քեզ սովորեցրին նայել աւարի վրա, որպէս մի արդար վաստակի վրա։ Եթէ դու կրթված տիեզերկանքի այլ պայմանների մէջ, քո այդ հարուստ ձիրքերով կը լինեիր մարդկութեան հրաշալիքը։

Վարդանը այժմ դարձաւ դէպի վիրաւոր էֆէնդին. մարմնը չոչոնց, ոլորտվին տաք էր. չընչառութիւնը այժմ աւելի կանոնաւոր էր. միայն երբեմն արձակում էր խուլ հառաչանքներ. Քրդուհին կրկին սկսեց թախանձել, թէ ցանկանում է նայել վիրաւորին։ Վարդանը թոյլ տուեց. նա գիտէր, որ վիրաբուժութեան արհեստը չատ առաջ է գնացել քրդերի մէջ, որոնց համար վէրքը և արիւնը սովորական դէպքեր են, և նրանց բժշկութիւնը կենսական անհրաժեշտութիւններից մէկն է.

—Երկիւղ չը կայ, ասաց քրդուհին վերջացնելով իր զործողութիւնը,—վէրքերը անհան են, բայց ոսկորների մէջ ջարդվածներ կան, երևում է, որ հիւանդը մի տեղից պէտք է ցած ընկած լինի։

Վարդանը ոչինչ չը պատասխանեց.

—Այժմ ձեզ համար պէտք է ուտելու մի բան պատրաստել։

Երիտասարդը այժմ միայն զգաց, որ քաղցած է, որ ամբողջ օրը ոչինչ չէ կերել։ Բայց լինում են բոպէներ, որ մարդը թէև քաղց է զգում, բայց ուտելու անտրաքայ չունի։ Նա այդ դրութեան մէջ էր. միտքը և օրան ցաւը կլուացրել էին նրան.

—Ոչինչ պատրաստութիւն պէտք չէ, պատասխանեց նա,—ինձ միայն տուեցէք մի կոտր հաց և պանիր։

Վարդանի համեստ պահանջը վիրաւորեց քրդուհու հիւրասիրական զգացմունքը, որ ցանկանում էր նրա համար մի տաք կերակուր պատրաստել։

—Մի խնդրեցէք մեզ, ասաց նա ժպտելով,—մենք այժմ այնպէս աղքատ չենք, որպէս առաջ։

—Այսպ, Բաղդէդը հարստացրեց ձեզ....

—Բացի Բաղդէդից, մենք այստեղ լաւ հունձ ունեցանք.... Անցեալ տարի հիւանդութիւնը մեր բոլոր անասունները կոտորեց, մնացինք առանց կտոր հացի, բայց այս տարի Աստուած փոխարէնը տուեց։ Այստեղի բոլոր հայերը գաղթեցին, գնացին և իրանց հարստութեան մեծ մասը թողեցին քրդերին։

—Ո՞ւր գնացին։

—Չեմ իմանում, բայց այնքան չատապով և այնքան յանկարծ եղաւ նրանց գաղթականութիւնը, որ ժամանակ չունեցան ամեն բան իրանց հետ վեր առնել, ուշնասում էին չուտով փախչել, որ թուրքերը չը կոտորեն նրանց։

—Ազատեցան։

—Մնացածներից չատերին կոտորեցին։

Սարսափելի իրականութիւնը փոքր առ փոքր պարզվում էր Վարդանի համար։ Անչուչա կատարվել էր հայերի մի ընդհանուր գաղթականութիւն այս զաւառից։ Բայց դէպի որ կողմ և ինչ պատճառով,—քրդուհին նրան որոշ բացատրութիւնները տալ չը կարողացաւ։ Վարդանը ընկաւ դառն մտածութիւնների մէջ։ Նա բոլորովին մոռացաւ իր ջաղացածութիւնը, և մինչև անգամ չէր նկատում գեղեցիկ քրդուհուն, որ խսկոյն օջախի մէջ կրակ վառեց և սկսեց նրա համար ձուաձեղ պատրաստել։

Ուրիշ ժամանակ, սրտի աւելի ուրախ տրամադրութեան մէջ, որ և իցէ երիտասարդ չէր կարող առանց հիացմունքի նայել դեղեցիկ կնոջ դայլայլ հասակի վրա, որ իր պարզ շապիկի մէջ դարձեալ գեղեցիկ էր։ Գիշերային անկողնից նոր վերկացած լինելով, գլխին քող չունէր նա, միայն թանձր և թուխ գիսակները պսակի ձեւով նայում էին սիրուն ճակատի վրա։ Այսպիսի գլուխ այսպիսի հարուստ մազերով, այնպիսի գէնք այսպիսի փայլուն աչերով, կարող էին ուռնենալ լեռնային կիսամերկ յաճախարարները միայն, որոնք աղրիբների յատկութեան մէջ են տեսնում իրանց գեղեցկութիւնը։

(Ը չարունակվի)